



Ազդարարության Trumpet's Sound **փող**

54-րդ ՏԱՐԻ, ԱՄՍՐԱՆԻԱ
ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ 2023

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵՆ ՓՈՎ»
երկամսյա հոգեւոր թերթ

Պատասխանատու խմբագիր՝
հովիւ Հրաչ Գույումեան

ACM AUSTRALIA
PO BOX 1593,
CHATSWOOD NSW 2057
EMAIL: hkiujian@acmaust.org
URL: www.acmaust.org



Բովանդակություն

Դժուար ժամանակներուն մէջ 3

Հովիւ՝ Հրաչ Գույումեան

Աստուծոյ դատաստանի ժամանակը . . 5

Տոն Սրորմիր

Յովհաննէս՝ սիրոյ առաքեալը 8

Տօք՝ Փօլ Ուայքինկ

Ընդամենը մէկ բառ (1). 12

Նէյլ Պուրման

Սիրոյ գերագոյն արարքը 12

Դաւիթ Տօքօրեան

Մօր մը մեծ հաւատքը 16

Քաղդաժ

- Շնորհակալութիւն յայտնէք Տիրոջը՝ Ապրիլ ամսուայ մէջ կատարուած բոլոր բացօթեայ ծառայութիւններուն համար:
- Շնորհակալութիւն յայտնէք Տիրոջը Հայաստանի եւ Արցախի սահմաններու խաղաղութեան համար:
- Աղօթեցէք Արցախի հանրապետութեան եւ 120,000 բնակչութեան համար, ովքեր արդէն աւելի քան 180 օր արգելափակուած վիճակի մէջ են:
- Աղօթեցէք 25-րդ բեռնարկղի ապահով Հայաստան ժամանման համար:
- Աղօթեցէք, որ Տէրը փառաւորուի մինչ կը տօնենք ACM-ի 25-րդ ամեակը:
- Աղօթեցէք բոլոր անոնց համար, ովքեր պիտի միանան Յուլիսի միսիոներական առաքելութեանը:
- Աղօթեցէք ACM-ի խնամքի տակ գտնուող բազմաթիւ երեխաներու համար:

Կազմի նկարը՝ հայկական ծաղիկներ,
ACM 2014թ.

Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբուխ նուէրներով:

Դժուար ժամանակներուն մէջ

Մեր կեանքին մէջ բոլորս ալ կը բախուինք դժուար ժամանակներու: Հաւատացեալները գերծ չեն խնդիրներէն: Մենք կը բախուինք անյաջողութիւններու, հիւանդութեան, ընտանեկան խնդիրներու, աշխատանքի դժուարութիւններու, զաւակներու հետ կապուած դժուարութիւններու, ֆինանսական նեղութիւններու, երբեմն աներեւակայելի իրավիճակներու, եւ այդ ամէնը կը պահենք մեր սրտերուն մէջ: Երբեմն բարկութեամբ կ'աղաղակենք. «Ինչո՞ւ Տէր, ինչո՞ւ ես»:

«Եւ բոլոր շնորհներու Աստուածը, որ մեզ իր յաւիտենական փառքին կանչեց Քրիստոս Յիսուսին միջոցով, քիչ մը ատեն նեղութիւն կրելէ ետքը, ինք ձեզ թող կատարեալ ընէ՛, հաստատէ՛, զօրացնէ՛ ու հիմնէ՛» (Ա Պետ. 5:10):

Ես կը սիրեմ այս համարը, քանի որ այն կը վստահեցնէ մեզ, որ նեղութիւնները որոշ ժամանակի համար են: Տէրը անոնց համար վերջնաժամկէտ սահմանած է: Մենք երբեմն կը մոռնանք, որ այս անիծուած աշխարհին մէջ կը բնակինք, եւ թէ երկինքն է մեր երթալու վայրը: Մարգարէներէն, սուրբերէն եւ Աստուածաշունչի հաւատացեալներէն շատերը, ներառեալ մեր Տէր Յիսուս Քրիստոսը, տառապանք կրեցին երկրի վրայ:

«Ո՛չ միայն այսքան՝ հապա նաեւ նեղութիւններու մէջ կը պարծինք. վասն զի գիտենք թէ նեղութիւնը համբերութիւն կը գործէ: Եւ համբերութիւնը՝ փորձառութիւն ու փորձառութիւնը՝ յոյս» (Հռովմ. 5:3-4):

Յոյս մեր Տէր Յիսուսի նկատմամբ, յոյս Անոր հանդէպ, ով մեզ այնքան սիրեց, որ Իր Որդին տուաւ՝ մեզ մեղքէն եւ յաւիտենական տառապանքէն փրկելու համար: Մեր յոյսը միայն Քրիստոսի վրայ է:

Մեր տառապանքները ոչինչ են Տէր Յիսուսի, Անոր աշակերտներու եւ առիծներու առջեւ կանգնած հաւատացեալներու տառապանքներուն հետ:

Ներկայ ներութիւնն ու ապագայ փառքը

«Վասն զի ես այսպէս կը նկատեմ թէ այս ժամանակին չարչարանքները բան մը չեն գալու փառքին քով՝ որ մեզի պիտի յայտնուի» (Հռովմ. 8:18):

Շատ անգամ ներութեան կը հանդիպինք, քանի որ Տէրը կ'ուզէ կերտել մեր բնատրոթիւնը Քրիստոսի մէջ: Ես անձամբ դժուար ժամանակներով անցած եմ: Քանի դեռ այս աշխարհին մէջ եմք, մենք միշտ ներութիւններ պիտի ունենանք: Մենք ապահովագրուած չենք ատոնց նկատմամբ:

Բայց շատ կարեւոր դասեր կան, որոնք կրնանք սորվիլ մեր ներութիւններէն: Ահա մի քանիսը, որ ես սորված եմ:

1. Վաղ առաւօտեան Ան ինձի հետ է:
2. Ան է, որուն պէտք է հետեւիմ:
3. Ան միակն է, ով կեանք կուտայ եւ միակն է, որ կը խլէ այն:
4. Ես ամբողջութեամբ պէտք է Աստուծոյ ապաւինիմ:
5. Ես պէտք է Իր առաջնորդութեանը սպասեմ:
6. Քանի դեռ Իր մէջ կը մնամ, ես ապահով եմ:

Թող Տէրն օրհնէ ձեզ, մինչ քրիստոնէական կեանքով կ'ապրիք այս երկրի վրայ:

Հ. Գ.



«Ուստի թուցած ձեռքերը ու տկար ծունկերը հաստատեցէ՛ք:
Եւ շիտակ ձամբաներ փնտոեցէ՛ք ձեր ոտքերուն, որ չըլլայ թէ ան
որ կաղ է՝ խոտորի, այլ՝ մանաւանդ բժշկուի: Խաղաղութեան ետեւէ
եղէ՛ք ամենուն հետ եւ սրբութեան, առանց ասոր մէ՛կը պիտի չտեսնէ
Տէրը: Զգուշացէ՛ք, չըլլայ որ մէկը Աստուծոյ շնորհքէն ետ մնայ.

չըլլայ որ դառնութեան արմատ մը վեր երեւնալով՝

ձեզ նեղէ ու անով շատեր պղծուին»:

Եբր. 12:12-15

Աստուծոյ դատաստանի ժամանակը

Փարաւոնը՝ պատժուած, Իսրայէլը՝ ազատ արձակուած

Խաւարի երեք օրերէն յետոյ փարաւոնն Իսրայէլի որդիներուն առաջարկեց իրենց հետ առնել իրենց ընտանիքները Տիրոջը երկրպագելու համար, բայց հօտերն ու արջառները մնան Եգիպտոսի մէջ: Սա միանշանակ անընդունելի էր Մովսէսի համար: Ուստի փարաւոնը վերջնագիր ներկայացնելով որոշեց, որ այլեւս գիշումներ պիտի չ'ընէ: Եթէ Մովսէսը իր առջեւ ներկայանար, ապա պիտի սպաննուէր:

Փարաւոնի վերջնագիրը

Փարաւոնն ակնյայտօրէն կը կարծէր, թէ այս խնդիրներուն կրնար վերջ տալ, որոնք իր կարծիքով, Մովսէսի պատճառով էր, եթէ սպառնար նրան մահով: Սակայն Մովսէսը պատրաստակամօրէն համաձայնեց, որ փարաւոնն այլեւս իր երեսը պիտի չտեսներ: Աստուած իրեն արդեն տուած էր յաջող (եւ վերջին) պատուհասի մանրամասները:

Մովսէսը փարաւոնին ըսաւ, թէ Տէրը կէս գիշերին Եգիպտոսի մէջ պիտի ելլէ, եւ Եգիպտոսի բոլոր անդրանիկները պիտի մահանան՝ իր արքունի վրայ նստող փարաւոնին անդրանիկէն մինչեւ աղօրիքին ետեւը եղող աղախինին անդրանիկը եւ բոլոր անասուններուն անդրանիկը: Երբ այդ կատարուէր, փարաւոնը պիտի հրամայէր Իսրայէլի որդիներուն հեռանալ իր երկրէն:

Դատաստան, որը շուտով պիտի կատարուի

Աստուած Մովսէսին ըսաւ, թէ Եգիպտոսի մէջ պիտի ելլէ: Ան պիտի սպանէ բոլոր անդրանիկներուն եւ դատաստան պիտի բերէ Եգիպտոսի բոլոր աստուածներու վրայ: Աստուած երկու բան կ'ընէր: Ան կ'ապացուցէր, որ Ինքը միակ Աստուածն է, եւ կը պատժէր փարաւոնին՝ անհնազանդութեամբ Իր դէմ յարատեւ ապստամբելու համար:

Այս իրադարձութեան մէջ երեւան կուգայ Աստուծոյ՝ դատաստան իրականացնելու սկզբունքը: Երբ Աստուած դատաստան կ'իրականացնէ, ապա այն արդարացիօրէն բոլոր մարդկանց վրայ կը տարածուի,

քանի որ բոլորն ալ մեղք գործեցին եւ զրկուեցան Աստուծոյ փառքէն: Աստուած աշառութիւն չ'ընէր: Բայց Աստուած նաեւ դատաստանը խուսափելու միջոցներ կը տրամադրէ: Եկէ՛ք տեսնենք, թէ ինչպէ՞ս գործեց այս սկզբունքը այս իրադարձութեան ժամանակ:

Պաշտպանուելու միջոց

Աստուած փախուստի միջոց տրամադրեց, չնայած որ փարաւոնին եւ անոր ժողովուրդին պիտի պատժէր: Մովսէսը երբեք չսահմանափակեց փրկութեան ծրագիրը միայն Իսրայէլի որդիներով: Ամսուայ 10-րդ օրը ժողովուրդը պէտք է ընտրէր անարատ գառնուկ մը եւ չորս օր պահէր այն: Այնուհետեւ 14-րդ օրը, երեկոյեան, պէտք է մորթէին գառնուկը, եւ արիւնէն քիչ մը վերցնէին ու քսէին իրենց տուններու դռներուն եւ շեմերուն վրայ: Արիւնը պէտք է կիրառուէր՝ օգտագործելով զոպան, որը թաթախուած էր գառնուկի արեան մէջ: Այնուհետեւ մարդիկ մինչեւ առաւօտ պէտք է մնային իրենց տուններուն մէջ:

Եթէ իրենց տուններուն մէջ մնան, ապա պիտի պաշտպանուին կործանիչ հրեշտակէն: Աստուած «պիտի անցնէր» դռան վրայով, որտեղ արիւնը քսուած էր, եւ թոյլ պիտի չտար, որ կործանիչը այդ տունը մըտնէր: Տան մէջ բոլորն ալ ապահով էին, քանի որ Աստուած երաշխաւորած էր պաշտպանել բոլոր անոնց, ովքեր Իրեն կը հնազանդին:

Ոչ մէկ եգիպտացի չփախաւ

Ամսուայ 14-րդ օրուայ կէս գիշերին կործանիչ հրեշտակը հարուածեց Եգիպտոսը: Եգիպտացիներու իւրաքանչիւր տանը մահ ու ողբ կար, որովհետեւ չկար տուն մը, որտեղ մահացած անձ չ'ըլլար: Մենք կրնանք հարց տալ. Արդեօ՞ք եգիպտացիները գիտէին գալիք դատաստանի մահին: Այո՛, անկասկած: Անոնք քաջատեղեակ էին փարաւոնի եւ Մովսէսի պայքարի մասին: Կարո՞ղ էին իրենք նոյնպէս Ջատիկի գառնուկ պատրաստել: Մեզ ոչինչ յայտնի չէ, բայց կը թուայ թէ չկար որեւէ սահմանափակում, որը փրկութիւնը սահմանափակեց միայն Իսրայէլացիներուն: Այն, ինչ մենք գիտենք, այն է, որ փախուստի միայն մէկ ճանապարհ կար, եւ այդ կը նշանակէր Աստուծոյ հաւատալ ու հնազանդիլ Իրեն:

Քոլոր Իսրայելացիները ազատ արձակուեցան

Փարաունը կանչեց Մովսէսին ու Ահարոնին: Ան եւ իր բոլոր ծառաները գիշերը արթնցան Եգիպտոսի մէջ մեծ աղաղակի պատճառով: Չկար տուն մը, որտեղ ինչ-որ մէկը մահացած չ'ըլլար: Փարաունը Մովսէսին հրամայեց. «Ելէ՛ք իմ ժողովուրդիս մէջէն՝ դո՛ւք ալ եւ Իսրայէլի որդիներն ալ ու գացէ՛ք պաշտեցէ՛ք Եհովան՝ ինչպէս ըսիք: Նաեւ ձեր հօտերն ու ձեր արջառները ամէ՛ք ու գացէ՛ք եւ զիս ալ օրհնեցէ՛ք»:

Շարունակական սկզբունքներ

Որոշ ճշմարտութիւններ արժէ առանձնացնել: Նախ՝ Աստուած թոյլ չի տար, որ որեւէ անձ՝ թագաւոր, թէ հասարակ մարդ, ընդմիշտ մարտահրաւեր նետէ Իրեն: Վաղ թէ ուշ դատաստանը պիտի հասնի: Սակայն, երբ դատաստանը մօտենայ, միշտ փախուստի միջոց կայ, եւ այդ միջոցի հիմքը հաւատքի սկզբունքն է:

Աստուած շատ ատելի մեծ է, քան այն աստուածները, որոնք մարդիկ կը ստեղծեն իրենց համար: Եգիպտոսի աստուածները բացարձակապէս ուժ չունէին եւ բոլորովին անպիտան էին: Այնուամենայնիւ, մեր հասարակութեան մէջ մարդիկ աստուածներ կը պատրաստեն, որոնց կը պաշտեն ու որոնց կը վստահին: Ի վերջոյ, այս աստուածները չեն կրնար փրկել իրենց Աստուծոյ դատաստանէն:

Մարդիկ չեն կրնար Աստուծոյ դէմ ապստամբիլ եւ անպատիժ մնալ: Եթէ մարդիկ վճռած են Աստուծոյ դէմ ապստամբիլ, վաղ թէ ուշ, անոնք պէտք է քաղեն իրենց մեղքերուն հետեւանքը: Հռովմ. 1-ին գլուխի սկզբունքները անփոփոխ են: Աստուած թոյլ կուտայ, որ մարդիկ իրենց ուզած ճանապարհով ընթանան, բայց դատաստանը պիտի չուշանայ:

Օր մը Աստուած պիտի կանչէ տղամարդկանց եւ կանանց, որ Իրեն հաշիւ տան: Մարդոց սահմանուած է մէկ անգամ մեռնիլ ու անկէ ետքը դատաստան:

Այսօր՝ մեզ համար

Ճշմարիտ է, որ փրկութեան միայն մէկ ճանապարհ կայ: Սա մեր լաւագոյն ջանքերու շնորհիւ չէ, այլ Տէր Յիսուս Քրիստոսի հանդէպ հաւատքի շնորհիւ: Միայն Իր մէջ կարելի է փրկութիւն գտնել: Դուք հաւատքով դիմա՞ծ եք Իրեն:

Յովհաննէս՝ սիրոյ առաքեալը

Պիտի սկսինք Յովհաննէս առաքեալի մասին մեր սերտողաշարքը: Յովհաննէսը կոչուած է սիրոյ առաքեալ: Ան Յովհաննէս Աւետարանի, իր անունը կրող երեք նամակներու եւ Յայտնութեան գրքի հեղինակն է:

Ես իսկապէս կը սիրեմ Յովհաննէսի գրածները կարդալ մէկ պարզ պատճառով. Որպէս երիտասարդ ան միացաւ Յիսուսի աշակերտներու խումբին, հաւանաբար երբ դեռ պատանի էր, եւ ըստ վստահելի աղբիւրներու, ան ապրեցաւ մինչեւ 100 տարեկան հասակը: Կ'ըսուի թէ, իր կեանքի վերջին տարիներուն զինք գրկած կը տանէին քրիստոնէական ժողովներուն մասնակցելու, և երբ կը ողջունէր մարդկանց, ան միշտ կ'ըսէր. «Որդեակներ, սիրէ՛ք միմեանց»:

Բայց սա չէ պատճառը, թէ ինչու այդքան կը կարեւորեմ Յովհաննէսի գրածները: Ես իսկապէս կը կարեւորեմ այն, քանի որ ահա մի մարդ, ով ականատես է այդ ամէնուն: Որպէս երիտասարդ ան մասնակցեցաւ Յիսուսի երկրային կեանքին: Ան Յիսուսի առաջին հետեւորդներէն մէկն էր: Մարկոսը կը նկարագրէ իր կանչը Մարկ. 1:19-20-ի մէջ:

Յովհաննէսի ծնողքը ձկնորսական եկամտաբեր պիզնետով ապահովուած էր: Ձկնորսութիւնը կենսական արդիւնաբերութիւն էր այդ ժամանակի ու վայրի համար: Հաւանական է, որ Յովհաննէսը Յիսուսի մասին լսած էր Յովհաննէս Սկրտչի միջոցով, եւ որ Անդրէասի հետ գացած էր Յիսուսի հետ խօսելու եւ Անոր մօտ մէկ օր անցնելու: Այժմ Յիսուսը կը մօտենայ իրեն ու կը կանչէ զինք Իրեն հետեւելու՝ որպէս աշակերտ: Կը թուայ, թէ Յովհաննէսը չի երկմտիր, այլ անմիջապէս իր աւագ եղբոր՝ Յակոբոսի հետ կը հետեւէ Յիսուսին:

Յովհաննէսը երեք տարի ապրեցաւ Յիսուսի եւ միւս աշակերտներուն հետ: Ան տեսաւ Անոր կատարած հրաշքները՝ հիւանդի, կաղի, կոյրի բժշկութիւնները, մեռածի յարութիւնը, փոթորիկի հանդարտեցումը... Ան լսեց Յիսուսի ուշագրաւ ուսուցումները եւ այնուհետեւ՝ Անոր կերպարանափոխութիւնը, դաւաճանութիւնը, ձերբակալութիւնը, դատաւարութիւնը եւ խաչելութիւնը: Այնուհետեւ ան տեսաւ Անոր յարութիւնը,

համբարձումը եւ Հոգեգալուստը՝ այդ անմոռանալի, կեանք փոխակերպող փորձառութիւնը: Ան ականատես եղաւ մէկ օրուայ մէջ հազարատոններու դարձին: Ան տեսաւ եկեղեցիի աճը՝ իր արտաքին ու ներքին բոլոր դժուարութիւններով, եւ ականատես եղաւ Յիսուսի աշակերտներէն շատերու նահատակութեանը: Իր եղբայրը նահատակուեցաւ, իսկ ինքն ալ արքայութեան Պատմոս կղզի:

Եւ հիմա, այս երկար ու սքանչելի կեանքի մայրամուտին, ան սկսաւ գրել: Իր գրութիւնները կը տարբերուին Մատթեոսի, Մարկոսի եւ բժիշկ Դուկասի գրածներէն: Կը խորհիմ, թէ այն տարբեր էր, որովհետեւ Յովհաննէսը ժամանակ ունէր խորհրդածելու, թէ ինչ կը նշանակէր այդ ամէնը: Արդեօ՞ք ան Աստուծոյ Որդիին հետեւացաւ, թէ՞ պարզապէս մարգարէի մը: Արդեօ՞ք ամէն ինչ արժէր՝ գրկանքը, տառապանքը, ցաւը, վիշտը...: Եւ այսպիսի կեանքի աւարտին իր յստակ վկայութիւնն այն էր, որ այո, այո ամէնը ճշմարիտ էր, ամէն ինչ արժէր, եւ ան կ'ուզէր, որ աշխարհն իմանար ճշմարտութիւնը ու ճանչնար Իր Ուսուցչին, որուն հաւատարմօրէն հետեւած էր:

Այդ ամէնը յստակ կ'երեւնայ, երբ կը կարդանք իր գրութիւնները: Ան գրեց. «Բայց ասոնք գրուեցան, որպէս զի հաւատաք թէ Յիսուսը Քրիստոսն է, Աստուծոյ Որդին եւ որպէս զի հաւատալով կեանք ունենաք անոր անունովը»:

Ահա Յովհաննէսի գրելու նպատակը: Ան գրեց, որպէսզի ճշմարտութեանը հաւատանք եւ Յիսուսի անունով յաւիտեանական կեանք ունենանք: Հիմա եկէ՛ք անդրադառնա՛նք իր երեք նամակներուն: Իր 1-ին նամակին մէջ կը կարդանք այս բացատրութիւնը. «Այս բաները կը գրենք ձեզի, որպէս զի ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ» (Ա Յովհ. 1:4): Յովհաննէսն այս նամակը գրեց, որպէսզի այն ընթերցող քրիստոնեան ուրախութեամբ լեցուի: Սա լիովին համահունչ է Յիսուսի փափակին: Յիսուսն Աղօթեց Երկնաւոր Հօրը Իր ծառայութեան աւարտին, «... Որպէս զի իմ ուրախութիւնս իրենց անձերուն մէջ կատարեալ ըլլայ» (Յովհ. 17:13):

Այնուհետեւ նամակի 2-րդ գլխուն մէջ Յովհաննէսը կ'ըսէ. «Որդեակներս, այս բաները ձեզի կը գրեմ, որպէս զի մեղք չգործէք» (Ա Յովհ. 2:1): Ան կը փափաքի, որ Յիսուսին մօտ մնանք, հեռու չարէն կամ մեր մէջ բնակող հին մարդէն: «Որպէս զի մեղք չգործէք»:

Եւ երրորդը, իր նամակի աւարտին. «Այս բաները գրեցի ձեզի՝ որպէս զի գիտնաք թէ յաւիտենական կեանք ունիք դուք՝ որ Աստուծոյ Որդիին անուանին կը հաւատաք»։ Ան կը փափաքի, որ մենք հաստատ իմանանք, որ իսկապէս յաւիտենական կեանք ունենք՝ վստահելով Յիսուսին։

Յովհաննէս կարծես կ'ըսէ. «Ես կ'ուզեմ, որ դուք լիակատար ուրախութիւն ունենաք, ես կ'ուզեմ, որ դուք չմեղանչէք, եւ իմանաք, որ յաւիտենական կեանք ունիք»։ Ասոնք են իր գրելու պատճառները, եւ ասոնք պէտք է ակնկալենք երբ կը կարդանք Յովհաննէսի գրածները։

Սակայն Յովհաննէսը միշտ չէ, որ այդքան սիրալիր եւ աստուածավախ մարդ էր։ Որպէս երիտասարդ, եւ յատկապէս որպէս Տէր Յիսուսի երիտասարդ հետեւորդ, ան սորվելու շատ բան ունէր։ Յիսուսը իրեն եւ իր եղբօրը՝ Յակոբոսին անուանեց «Որոտման որդիներ»։

Յովհաննէսին նոյնպէս կը մտահոգէր, թէ ո՞վ է Յիսուսի աշակերտներէն ամենամեծը (Դուկաս 9)։ Յիսուսը անոնց ցոյց տուաւ փոքրիկ տղայ մը եւ ըսաւ. «Ան որ ձեր ամէնուն մէջ պզտիկ է, անիկա մեծ պիտի ըլլայ»։ Այնուհետեւ Յովհաննէսը տեսաւ մէկին, ով Յիսուսի անունով կը ծառայէր, բայց Տասներկուքին հետ չէր։ Ան Յիսուսին ըսաւ, որ իրենք փորձեցին արգիլել անոր, քանի որ ան կը գողնար իրենց «համբաւը»։ Բայց Յիսուսը յանդիմանեց իրենց հպարտութիւնը. «Մի՛ արգիլէք, քանզի ան որ մեզի հակառակ չէ, մեր կողմէն է»։ Յետոյ Յիսուսն աշակերտներուն Սամարիայի գիւղերէն մէկը դրկեց։ Բայց ոչ որ չողջունեց իրենց, երբ հասկցան, որ անոնք Երուսաղէմ պիտի երթան։ Սամարացիները հրեաներուն չէին սիրեր։ Յակոբոսն ու Յովհաննէսը վրդովուած էին, որ իրենց Վարդապետին հետ այդպէս վատ վերաբերուեցին։ Անոնք Յիսուսին դիմեցին ըսելով. «Տէ՛ր, կ'ուզե՞ս որ ըսենք ու երկնքէն կրակ իջնէ ու սատկեցնէ զանոնք, ինչպէս Եղիան ալ ըրաւ»։ Կը յիշե՞ք Յիսուսի պատասխանը. «Չէք գիտեր թէ ի՞նչ հոգիի տէր էք դուք. Վասն զի Որդին մարդոյ չեկաւ մարդոց հոգիները կորսնցնելու, հապա փրկելու»։ Երիտասարդ Յովհաննէսը, թէւ նուիրուած հետեւորդ էր, սակայն գաղափար չուներ, թէ ինչ կը նշանակէ Յիսուսի աշակերտը ըլլալ։ Ան Վարդապետէն սորվելու շատ բան ունէր։

Ի վերջոյ, Յակոբոսն ու Յովհաննէսը իրենց մոր գլխաւորութեամբ, մտածեցին, որ կարող են Յիսուսի թագաւորութեան ամենաբարձր տեղերը զբաղեցնել։ Անոնց մայրը Յիսուսին ըսաւ. «Ըսէ՛ որ այս իմ երկու

որդիներս մէկը աջ կողմդ եւ միւսը ձախ կողմդ նստին քու թագաւորութեանդ մէջ» (Մատթ. 20:21): Կրկին Յիսուսի պատասխանը ցոյց կուտայ, թէ որքան շատ բան պէտք է սորվին: «Չէք գիտեր թէ ի՞նչ կը խնդրէք»: «Ձեզմէ ով որ մենք ըլլալ կ'ուզէ, թող անհկա ձեր սպասաւորը ըլլայ»:

Յովհաննէսը սորվելու շատ բան ուներ, թէւ ան Յիսուսի հետեւորդն էր: Ան հոգեւորապէս աճեց: Իր կեանքի ամենաթոյլ կողմերը դարձան ուժեղ կողմեր: Սա կարող է պատահիլ նաեւ մեր կեանքին մէջ, երբ թոյլ տանք, որ Վարդապետը փոխէ մեզ:

Ես եւ դուք սորվելու շատ բան ունինք, երբ դարձանք Յիսուսի հետեւորդները: Որքա՞ն սորված ենք:

Այնուհետեւ օրը եկաւ. այն կարեւոր օրը, երբ Սուրբ Հոգին եկաւ աշակերտներուն եւ Յովհաննէսի վրայ: Եւ Յովհաննէսը, ինչպէս մնացածը, դարձաւ նոր մարդ: Մարդ, ով բառացիօրէն վերածուեցաւ այնպիսի մարդու մը, որուն եկեղեցական պատմութիւնը կոչեց՝ սիրոյ առաքեալ: Սիրոյ աստուածաբանութիւնը կ'արտացոլուի իր Աւետարանին նամակներուն մէջ: Յովհաննէսը կը գրէ, որ Աստուած սիրոյ Աստուած է, որ Աստուած սիրեց Իր Որդին, որ Յիսուսը սիրեց Աստուծոյ՝ Իր Հօրը, որ Աստուած սիրեց Յիսուսի աշակերտներուն, որ Քրիստոսը սիրեց աշակերտներուն, սիրեց իւրաքանչիւրին որպէս անհատ, որ Աստուած կը սիրէ աշխարհը, եւ որ Քրիստոս կ'ակնկալէ, որ մարդիկ սիրեն Իրեն, եւ որ Քրիստոս սորվեցուց, որ պէտք է սիրենք միմեանց, եւ որ սերը Աստուծոյ օրէնքի ամբողջութեան կատարումն է:

Մենք, ինչպէս Յովհաննէսը, հեռու ենք Յիսուսի ուզած անձը ըլլալէն: Մենք Յիսուսին մեր ընտանիքներուն, համայնքներուն եւ մեր աշխարհին մէջ ներկայացնելու պատասխանատւութիւնն ունինք: Բայց երբ կը տեսնենք, թէ ինչպէս Յիսուսը փոխեց Յովհաննէսին, ու ան դարձաւ սիրոյ առաքեալ, մենք նոյնպէս Աստուծոյ Հոգիով ներշնչուած կը սորվինք աւելի ու աւելի Վարդապետին նմանուիլ, ով մեզ սիրեց եւ Իր Անձը մեզ համար մատնեց:

Sopp.՝ Փօլ Ուայթինկ



Ընդամէնը մէկ բառ (1)

Ծարաւ

«Եթէ մէկը ծարաւ է, թող ինծի գայ ու խմէ» (Յովի. 7:37):

Այս խօսքերը հնչած են Տաղաւարահարաց տօնի ժամանակ, երբ Իսրայէլը կը յիշէր ու կը տօնէր Տիրոջ փրկարար գործութիւնն ու սէրը: Կը լսենք, թէ ինչպէս Տէր Յիսուսը երկրպագող ամբոյխի մէջ գտնուող ծարաւներուն կը հրաւիրէ Իր մօտ գալ, որպէսզի այդ ծարաւը լիովին յագեցուի:

Անոնց մէջ կանգնած էր Ան, ով միակն էր, որ կարող էր կատարելապէս եւ առատօրէն բաւարարել անոնց սրտի ամենախոր կարիքը:

Բայց ժողովուրդը ծարաւ չէր: Անոնք չէին սգար իրենց մեղքերու համար: Անոնք կուշտ էին, հարուստ եւ գոհ: Անոնք չցանկացան ազատուիլ մեղքի բեռէն եւ հաշտուիլ Աստուծոյ հետ:

Եւ այսպէս, քանի որ ծարաւ չէին, անոնք չեկան Իր մօտ եւ չխմեցին Յիսուսի առաջարկած ջուրը:

Արդեօ՞ք կ'ուզես խաղաղութիւն ունենալ Աստուծոյ հետ: Արդեօ՞ք ծարաւ ես:

Նէյլ Պուքման



Սիրոյ գերագոյն արարքը

Ամենակարող Աստուած նպատակ մը ունէր համայն մարդկութեան փրկութեան նկատմամբ: Փիլիպ. 2:8-ը կ'ըսէ. «Ինքզինք խոնարհեցուց, մինչեւ իսկ մեռնելու յօժարեցաւ ու այն ալ խաչի մահուամբ»: Արդեօք մենք ալ պիտի յօժարէի՞նք մեռնիլ ուրիշի մը համար: Կեանքը շատ արժէքաւոր է, բայց ի՞նչ պատճառ կրնանք ունենալ մեր կեանքե-

ընդ զոհելու ուրիշներու համար: Շատ կարեւոր պատճառ մը ըլլալու է: Մեր ըլլալու է, որպէսզի յօժարիմք մեր կեանքը զոհել ուրիշի մը համար: Աստուծոյ Խօսքը այսպէս կ'արտայայտուի Յովհ. 15:13-ի մէջ. «Ասկէ աւելի մեծ սէր մէկը չկրնար ունենալ, որ մէկը իր կեանքը բարեկամներուն համար դնէ»: Ամէնէն մեծ սէրը՝ կեանքդ քու բարեկամիդ համար տալ է: Հռովմ. 5:6-9-ին մէջ կը կարդանք. «Վասնզի երբ տկար էինք, յարմար ժամանակին Քրիստոս ամբարիշտներուն համար մեռաւ»: Քրիստոս Իր կեանքը տուաւ ամբարիշտին, թշնամիին համար: Մեզմէ արդեօք ո՞վ պիտի յօժարի իր կեանքը իր թշնամիին համար տալ: Համարը կը շարունակէ. «Վասն զի արդարի համար հազիւ կ'ըլլայ որ մէկը մեռնի, բայց բարի մարդու համար կարելի է որ մէկը համարձակի մեռնիլ. սակայն Աստուած Իր սէրը զոր մեր վրայ ունէր՝ յայտնեց, որ երբ դեռ մեղաւոր էինք, Քրիստոս մեզի համար մեռաւ»:

Թերթի մը մէջ վերնագիր մը այսպէս կ'արտայայտուէր. «Ձանաց ազատել ընկերը, սակայն երկուքն ալ խեղդուեցան»: Յիշեցի ուրիշ դէպք մը՝ Միսիսիբբի գետին մէջ մարդ մը ջանացած էր ազատել տղեկ մը, սակայն ինք խեղդուած էր: Իսկապէս այս անձինքը փութացին ազատել ուրիշ մը որո՞ւ ծանօթութիւն չ'ունէին: Հաւանաբար այդ փոքրիկ տղեկը որքա՞ն երախտապարտ եղաւ այն անձին որ զինք մահէն ազատեց: Երբ կը խօսին սիրոյ, զոհողութեան եւ երախտապարտութեան մասին, կը յիշեմ թէ անձինք եղած են որ ապերախտ գտնուած են: 40 տարիներ առաջ լսած էի որբեւայրի կնոջ մը մասին որուն տունը զիշերուայ մը մէջ անակնկալօրէն այրեցաւ: Որբեւայրին երբ կը ջանար իր երեք տարեկան աղջնակը կրակէն ազատել, բաւական վնաս կը կրէր ղիմագիծին եւ ձեռքերուն վրայ: Որբեւայրիին վիճակը պատճառ չ'ըլլար որ ան շարունակէր լաւագոյնը ընել իր զաւկին հոգատարութեան համար: Երբ այս աղջնակը երկրորդական վարժարանի վկայականը կը ստանայ, հանդէսին օրը, մայրը ուրախութենէն արցունքոտ աչքերով ամբոխին մէջէն կը ջանայ հասնիլ աղջկան զայն ողջագործելու համար: Երբ շուրջիներ կը նկատեն այս այրած դէմքով կնկան ինքնութիւնը եւ կ'ըսէ որ կարեւորութիւն չտան այդ անձին որովհետեւ իրենց սպասուիին էր:

Ի՞նչ մեծ ապերախտութիւն: Մարդ ինչպէ՞ս կրնայ ապերախտ ըլլալ երբ ուրիշ մը իր կեանքը կը ջանայ զոհել որպէսզի միւս անձը ապրի: Իսկ անձնագոհութեան մասին ուրիշ օրինակ մը կը յիշեմ: Բարեկամ-

ներէս մին որ Վիեթնամ գտնուած էր, կը պատմէր թէ խումբ մը զինուորներով երբ շրջանակի նստած կը խօսէին, յանկարծ թշնամիին կողմէ ձեռնառումը մը կ'իյնայ իրենց մօտ: Այս խումբին անձերէն մին կը նետուի ձեռնառումքին վրայ որ պայթելով կտոր կտոր կ'ընէ զինք, սակայն մնացեալ խումբը կ'ազատի: Ամերիկեան պատմութեան մէջ 1777 թուականներուն, յեղափոխութեան ժամանակ էր երբ 22 տարեկան երիտասարդ մը՝ Նէյթըն Հէյլ անունով, իբրեւ դաւաճան կը բռնուի անգլիացիներու կողմէ: Երբ զինք կախաղանի կը պատրաստեն, կը հարցնեն եթէ ըսելիք մը ունէ՞ր կախուելէն առաջ: Ան կ'ըսէ. «Կը ցաւիմ որ միայն մէկ կեանք ունիմ տալիք իմ երկրիս համար»: Ան շատ կը սիրէր իր երկիրը: Սէրը մեծ ոյժ մըն է զոր կը մղէ անձը անհնարին քայլեր առնելու: Արդեօք այսօր մենք ո՞ր դասակարգին կը պատկանինք, երախտապարտներո՞ւ, թէ ապերախտներու: Երախտապարտ ենք թէ ապերախտ՝ Յիսուս Քրիստոսի, խաչին վրայ սիրայօժար մեռնելուն: Պօղոս առաքեալ կը գրէ թէ Աստուած Իր սէրը մեզի յայտնեց երբ դեռ մեղաւոր էինք, որպէսզի հաւատալով փրկուինք ու զինք ընդունելով յաւիտենական կորստեան չմատուիինք: Յիսուս ըսաւ. «Ես իշխանութիւն ունիմ կեանքս դնելու եւ կեանքս առնելու, կեանքս կը դնեմ որպէսզի զայն ետ առնեմ, մէկը չի հասներ զայն ինձմէ, հապա ես զանիկա սիրով կը դնեմ»: Յիսուս միայն սիրտդ կ'ուզէ, եթէ սիրտդ Աստուծոյ դարձած է, բոլոր էութիւնդ եւ ունեցուածքդ Աստուծոյ դարձած է: Ի՞նչ է կարելորդ: Կ'արժէ՞ տանք Իրեն մեր սիրտը:

Երբ կը խորհիմ թէ ինչո՞ւ Աստուած Իր Որդին դրկեց խաչափայտին վրայ մահանալու իբր միջոց փրկելու բոլորը որոնք զԻնք կ'ընդունին իրենց Տէրն ու Փրկիչը ըլլալու, կը հարցնեմ, միթէ ուրիշ կերպ չկա՞ր: Անշուշտ կար, բայց Սուրբ Գիրքը կ'ըսէ թէ առանց արիւնի թափման մեր մեղքերը չեն ներուիր: Յիսուս Իր արիւնը թափեց մեր մեղքերուն համար, բայց Սուրբ Գիրքը կ'ըսէ թէ եթէ Յիսուս յարութիւնը չ'առնէր, մեր քարոզները պարապ պիտի ըլլային, մեր բոլոր ըրածները պարապ պիտի ըլլային: Յիսուս Քրիստոսի պատմութիւնը թաղումով չ'ընցաւ: Եթէ թաղումով լմննար շատ ցաւալի վիճակ պիտի ունենայինք: Աստուծոյ Խօսքը կ'ըսէ. «Քանզի մեղքին վարձքը մահ է, բայց Աստուծոյ ձրի պարգեւը յաւիտենական կեանք է մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով»: Ուրեմն յաւիտենական կեանք ունինք, պարզեւ մը որ Յիսուս մեզի համար պատրաստեց խաչին վրայ մահանալով: Հռովմ. 8:1-ը կ'ըսէ.

«Ուստի ալ դատապարտութիւն չկայ Քրիստոս Յիսուսով եղողներուն, որոնք մարմնաւոր կերպով չեն վարուիր»:

Այս համարները որ յիշեցի Աստուծոյ Խօսքէն մեզի կը սորվեցնեն թէ երբ Յիսուսը ընդունինք նոր անձ մը կը դառնանք, բայց երբ փոփոխութիւն տեղի չ'ունենայ մեր սրտերէն եւ կեանքերէն ներս կը մնանինք այն ոճրագործին, որ մարդ մը սպաննեց, բանտ գնաց ու պիտի կախուէր, ութ տարիներ կ'անցնին եւ օր մը այս անձին եղբայրը զինք կ'այցելէ: Եղբայրը կառավարիչին լաւ բարեկամն էր եւ շատ ծառայութիւններ ըրած էր անոր: Երբ կառավարիչը իր պաշտօնէն ու նահանգէն կը հեռանար այս մարդուն կ'արտայայտէ իր երախտապարտութիւնը եւ կը հարցնէ թէ ի՞նչ կրնար փոխադարձ ընել: «Ոչինչ» կը պատասխանէ մարդը: «Բայց լսածիս համեմատ դուն եղբայր մը ունիս բանտը եւ ահա՛սիկ բոլոր այն թուղթերը, որ ներում պիտի շնորհեն եղբօրդ»: Եղբայրը կ'առնէ այդ թուղթերը եւ կ'երթայ եղբօրը այցելութեան: Բանտին մէջ անոր կը հարցնէ թէ երբ դուրս ելլէր, ի՞նչ պիտի ընէր, եղբայրը կը պատասխանէ թէ առաջին առիթով դատաւորը եւ դատարանի անդամները պիտի սպաննէր որոնք զինք մահուած դատապարտած էին: Ութ տարիներ ետք տակաւին այս ոճրագործին հոգին փոխուած չէր, տակաւին կ'ուզէր սպաննել: Եղբայրը երբ այս կը լսէ սրտի ցաւով լռութեամբ թուղթերը ետ գրպանը կը դնէ ու կը հեռանայ բանտէն: Օրեր ետք այս ոճրագործը կը կախեն: Միթէ ցաւալի չէ՞ որ փոխանակ զոջալու ու դարձի գալու, որոշած էր որ նոյն ճամբով պիտի շարունակէր: Երբ Յիսուս մեզի համար մեռաւ, եւ մենք ստացանք նոր կեանք, պէտք է շարունակենք ապրիլ այդ նոր կեանքը մինչեւ վերջ: Փոփոխութիւնը տեղի կ'ունենայ, երբ մեր կեանքերը եւ գործերը պտուղ կը բերեն: Իբր քրիստոնեաներ մենք նշան մը ունինք որ մեզ տարբեր կ'ընէ ուրիշներէ, եւ Յիսուս ըսաւ. «Այդ նշանով պիտի գիտնան որ դուք իմ հետեւորդներս էք»: Ինչպէ՞ս, զիրար սիրելով: Երբ Տէր Յիսուսը իսկապէս սիրենք Իր կեանքը մեզի տալուն համար, վստահ եմ այն ատեն պիտի կարենանք իսկապէս զիրար սիրել:

Քաղում՝ «Հատընտիր հոգեւոր պատգամներ» գիրքէն

Ծերակուտական Դաւիթ Տօթթօրեան

Մօր մը մեծ հաւատքը

Երկար տարիներ Թօմ Քարթրի մայրը, Աստուծոյ աղօթած էր իր որդւոյն համար, որպէսզի ան փրկուի եւ անմահ հոգիները Փրկչին առաջնորդող քարոզիչ մը ըլլայ: Իր տղան չարագործ ու անզգամ մըն էր եւ բանտ նետուած էր: Հակառակ այդ բոլորին մայրը առանց վիատելու կ'աղօթէր, հաւատարմով որ Աստուած անպայման պիտի պատասխանէր իր թախանձանքով ըրած աղօթքներուն: Օր մը իր որդւոյն մահը գուժող հեռադիր մը կը ստանայ բանտէն:

Խեղճ մայրը մի քանի վայրկեան խռոված մնալէ յետոյ, կը քաշուի իր ներքին սենեակը, ծունկի կու գայ, կը բանայ իր Աստուածաշունչը եւ հետեւեալ սրտաբուխ աղօթքը կը մատուցանէ Աստուծոյ. «Ո՛վ Տէր, ես հաւատացի Քու անսուտն Խօսքէդ ինծի տուած խոստումներուդ: Հաւատացի նաեւ, թէ ես պիտի ապրէի, լսէի ու տեսնէի իմ Թօմիս փրկութեան բարի լուրը ու անոր Քու Աւետարանդ մեղաւորներուն քարոզելը: Հիմա, հեռագիր մը ինծի կ'իմացնէ թէ ան մեռած է: Ըսէ՛, Տէր իմ, ո՞րը ճիշդ է, հեռագիր՞ըր, թէ ոչ Քու Խօսքդ»:

Ան վստահ համոզումով, ոտքի կանգնեցաւ եւ Հետեւեալ հեռագիրը յղեց բանտի տնօրէնութեան. «Անպայման սխալ մը ըլլալու է, իմ տղաս մեռած չէ»: - Եւ իսկապէս սխալի մը արդիւնքն էր իր ստացած հեռագիրը: Թօմ Քարթրը կ'ապրէր: Շատ ժամանակ չանցած ան փրկուեցաւ բանտին մէջ եւ երբ անկէ ազատ արձակուեցաւ, եղաւ հոգիներու փրկութեան պատճառ եղող հզօր քարոզիչ մը:

Ո՛հ, իցի՛ւ թէ Տէրը մեր եկեղեցիներուն մէջէն այսպիսի հաստատ հաւատքով աղօթող մայրեր հանէր, որովհետեւ բազմաթիւ անառակ որդիներ ունինք, որոնք մեղքի ճամբաներուն մէջ կը թափառին յաւիտենական կորուստի դատապարտուած:

Ո՛վ Տէր, տուր մեզի այդ մեծ հաւատքը որ կարենանք զանոնք ետ Քու փարախդ առաջնորդել: Ամէն:

Քաղուած՝ «Զմայլելի դրուագներ» գիրքէն